Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2021 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՀԱՅՔԸՆԵՔԹ» ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՐԹԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 9	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1096114	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2019-10-10	
1.5 ՀՎՀՀ-ն	02815465	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)41201920	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://hyeconnect.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@hyeconnect.org	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Լիլիյա Ջավախյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	0	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Համահայկական վիրտուալ հարթակի ստեղծում	269079947
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

Digitally signed by JAVAKHYAN LILIYA 5511620157
Date: 2021.06.29 17:33:15 AMT

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Համահայկական վիրտուալ հարթակի ստեղծում	189720673	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	189720673	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	189720673	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 5 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ
"YEREVAN - AUDITCONSULT" CJSC

ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 3
info@yerevanaudit.am

Հեռ.՝ +37410 522 073
Բջջ.՝ +37493 25 05 80

www.yerevanaudit.am

YEREVAN-AUDIT
CONSULT

«23» հունիսի 2021թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայքընեքթ վիրտուալ հարթակ» Հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք *«Հայքընեքթ վիրտուալ հարթակ» Հիմնադրամի* (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքի, Հիմնադրամի սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ ՖՀՍՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջներին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՍՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՍՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՍՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումների, կամ, եթե այդպիսի բացայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերն կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության, ներառյալ՝ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու՝

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ

Տնօրեն՝ _____ *Լ. Ղոնյան*

Որակավորման վկայական թիվ 752

Աուդիտոր՝ _____ *Լ. Մարգսյան*

Որակավորման վկայական թիվ 703

«28» հունիսի 2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Տան.	2020թ. հազ. ՀՀդրամ	2019թ. հազ. ՀՀդրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	589	0
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		178,848	0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**179,437**	**0**
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ	10	43,512	49,421
Դրամական միջոցներ	9	108,534	20,526
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**152,046**	**69,947**
Ընդամենը ակտիվներ		**331,483**	**69,947**
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ		8,685	(133)
Ընդամենը զուտ ակտիվներ		**8,685**	**(133)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	589	0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**589**	**0**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2,125	719
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	320,084	69,039
Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ		0	321
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**322,209**	**70,080**
Ընդամենը պարտավորություններ		**322,798**	**70,080**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**331,483**	**69,947**

Տնօրեն՝ Լիլիյա Ջավախյան

Գլխ.հաշվապահ՝ Գայանե Եփրեմյան

Ստորագրման ամսաթիվ՝ 28.06.2021թ.

«ՀԱՅՔԸՆԵՔԹ» ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՐԹԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԵՐԵՎԱՆ YEREVAN "HYECONNECT" VIRTUAL PORTAL FOUNDATION
ՀԱՅՔԸՆԵՔԹ
HYECONNECT
02815465

*Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

		2020թ.	2019թ.
	Ծան.	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Շնորհներից եկամուտներ	5	17,277	2,906
Գործառնական ծախսեր			
Վարչական ծախսեր	7	(3,570)	(191)
Աշխատանքի վարձատրության ծախսեր	19	(13,011)	(2,583)
Այլ ծախսեր	8	(696)	(132)
Ֆինանսական եկամուտ		0	0
Ֆինանսական ծախսեր		0	0
Ֆինանսական տարվա զուտ շահույթ		**0**	**0**
Այլ համապարփակ եկամուտ		8,649	(133)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		8,649	(133)

*Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.06.2021 16:47